ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» 01 2017թ. N 3-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար մատակարարների ընտրության գործընթացը կանոնակարգելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով, հետևյալ կազմով՝

Ա. Հարությունյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Կ. Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ,

Գ. Օսիպյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության երկրագործության և սերմնաբուծության զարգացման բաժնի պետ,

Գ. Ավագյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ,

Ա. Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ,

Կ. Փահլեվանյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսական ծրագրերի մոնիթորինգի և վերլուծության վարչության պետ,

Ա. Ապերյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսա-բյուջետային բաժնի գլխավոր մասնագետ (քարտուղար),

Վ. Դավթյան - Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Ագրոքիմիական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն,

Մ. Եղիազարյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (համաձայնությամբ),

Հ. Տերտերյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (համաձայնությամբ),

Լ. Ալեքսանյան - «Արմավիրի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ),

Ջ. Ասլանյան - «Շիրակի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովի նախագահ Ա. Հարությունյանին՝

1) հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման վերաբերյալ մրցույթի հայտարարության տեքստի և հրավերի հաստատումն ու հրապարակումը,

2) ամփոփել մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար մատակարարի ընտրության մրցույթի արդյունքները և ընտրված մատակարարի վերաբերյալ ներկայացնել առաջարկություն:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ